ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԿԵՐՊԱՐԸ ԴՐԱՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՄԱԴՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Էլ. հասցե՝ *madona.martirosyan.94@list.ru*

DOI: 10.24234/scientific.v1i44.54

ԱՄՓՈՓՈՒՄ

Տիգրան Մեծի ժամանակակից դրամներից հայտնի կերպարը կենտրոնական տեղ է զբաղեցնում մոնումենտալ քանդակագործության, ինչպես նաև բարձրաքանդակ պատկերագրությունում: Հեղինակ քանդակագործ-դրվագողները կլոր արձաններ կերտելիս Տիգրան Մեծին պատկերել են յուրովի՝ հանդերձելով նրան ժամանակի հայտնի հռոմեական տիրակալների հագուստի նմանակմամբ: Եվ այդ այն պարզ պատճառով, որ Տիգրան Մեծի հայտնի հայեցի պատկերը դրամների վրա առկա է միայն կիսանդրիի չափով: Այս դեպքում քանդակագործները անգամ դիմապատկերի պարագայում նույնիսկ դրամից հայտնի դիմանկարը չեն պաշտպանել, առաջնորդվել են սեփական պատկերացումներով: Այդ առումով առավել պահպանողական են դրվագողները: Նրանց բարձրաքանդակներում Տիգրան Մեծը ճանաչելի պատկերում ունի և կրկնում է դրամների վրա եղած պատկերը:

Հայ արվեստագետներից Տիգրան Մեծի արձանաքանդակներ են կերտել Թոքմաջյան ընտանիքի ներկայացուցիչները: Նրանց ստեղծագործություններում արքայի կերպարն առավել խորհրդանշական է, քան կոնկրետ կերպավորմամբ:

Ձևով և բովանդակությամբ տարբերվում է Մատթեոս Լեսպագնանդելլի կողմից կերտված «Տիգրան, հայոց արքա» արձանը:

Արվեստի ինքնատիպ գործեր են Տիգրան Մեծի դրամների դիմերեսին պատկերված հայոց արքայի բարձրարժեք բարձրաքանդակները, որոնք հիմք են

հանդիսացել հետագայում Տիգրան Մեծին պատկերող քանդակագործական աշխատանքների համար:

Հոդվածը նվիրված է Տիգրան Մեծի կերպարի պատկերմանը քանդակագործական արվեստում: Ստեղծագործությունների պատմաժամանակագրական, համեմատական վերլուծության հիման վրա փորձ է արվել հասկանալու Տիգրան Մեծին պատկերող գործերի առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ Տիգրան Մեծ, քանդակագործություն, Մաթեոս Լեսպագնանդելլի, «Պարթևստանի թագավոր», Տիգրան Հովհաննիսյան, պնակիտներ, Հովսեփ Պապիկյան, «հայկական թագ», Կարմիր Ջասպեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի նպատակը մեկ կերպարի տեսանկյան մեթոդի ուսումնասիրությունն է քանդակագործական արվեստում: Խնդիրներն են մեկ ամբողջության մեջ ներկայացնել Տիգրան Մեծի կերպարը կերտած հեղինակների աշխատանքները՝ քննության ենթարկել աշխատանքների ստեղծման ժամանակագրությունը, քանդակի տեսակի պատկանելիությունը, և կերպարի բնութագրիչ առանձնահատկությունները: Հետազոտության առարկան Տիգրան Մեծի կերպարն է:

Տիգրան Մեծի կերպարին այս ասպարեզում անդրադարձ են կատարել Լևոն Թոքմաջյանը, Հայկ Թոքմաջյանը, Տիգրան Հովհաննիսյանը, Մաթեոս Լեսպագնանդելլին և այլք: Տիգրան Մեծին պատկերող Լեսպագնանդելլիի «Պարթևստանի թագավոր» մոնումենտալ քանդակը ստեղծվել է Ֆրանսիայի Լուի XIV թագավորի պատվերով: Տեղադրվել է Վերսալի Լատոնի պարտեր այգու անտիկ քանդակների շարքում: Այն էականորեն տարբերվում է XX դարում ստեղծված քանդակներից թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ և թե՛ պատմական ժամանակագրությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Մեծի կերպարին անրադարձել են որպես պատմական նշանավոր դեմքի: Սակայն առաջադիր նպատակին հասնելու համար կարող ենք ասել որ, ներկայացվող թեման որևէ լուրջ ուսումնասիրության չի ենթարկվել: Եթե անգամ այդպիսիք առկա են, ապա միայն շատ թռուցիկ անդրադարձով: Մենք փորձ ենք

արել մի ամբողջության մեջ ներկայացնել քննվող թեման կիրառելով պատմահամեմատական, կառուցվածքաբանական, վերլուծական և նկարագրական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մ.թ.ա. I դարի 70-90 ական թթ. հայ ժողովրդի պատմության համար առանձնահատուկ էին նրանով, որ Հայաստանը, օգտվելով նպաստավոր իրավիճակից, բռնեց արտաքին նվաճումների ուղին: Շատ կարճ ժամանակում Հայաստանը դարձավ Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը: Այդ նվաճումներն իրականացրեց Տիգրան Մեծը (մ.թ.ա. 95-55 թվականներ): Հայաստանի սահմանները տարածվում էին Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Կասպիականը և Քուռ գետից մինչև Միջագետք՝ ընդգրկելով նաև մոտակա երկրները (Հայ ժողովրդի պատմություն, 1971): Տարածքային ընդլայմանը զուգահեռ մեծացավ առևտրի ծավալը: Շրջանառության մեջ հայտնվեցին Տիգրան Մեծի մի քանի տասնյակից ավելի դիմապատկերներով դրամները: Դրանք հատվել են Հայաստանի Տիգրանակերտի, Արտաշատի, ինչպես նաև Սիրիայի Անտիոքի և Դամասկոսի դրամահատարաններում (Մուշեղյան, 1983):

Հենց այդ դրամների վրա եղած պատկերագրությամբ է պահպանվել հայոց արքայի դիմանկարը: Անկախ մեզ հասած դրամների վիճակից, դրանց վրա եղած արքայական պատկերը աչքի է ընկնում անհատականության բնորոշ գծերով: Տիգրանի ոսկե, արծաթե, պղնձե դրամները ճանաչելի են առաջին իսկ հայացքից իրենց վրա պատկերված արքայական թագի ձևով, որ կրել են Տիգրան Մեծը և նրա տոհմի ներկայացուցիչները (Հայ ժողովրդի պատմություն, 1971): Թագի վրա, կենտրոնում ութթև աստղ է: Այն խորհրդանշում է արևը՝ որպես հավերժություն: Աստղի աջ և ձախ կողմերում մեկական արծիվներ են, որոնք պոչով հենված են աստղի հիմքին և գլխով շրջված են դեպի արևը: Արծիվի առկայությունը ուժի և իմաստության խորհրդանիշն է (Հայազն, 2005): Հայոց արքա Տիգրան Մեծի կերպարով հատված դրամների պատկերագրությանը, անկախ ինչ մետաղի վրա է, նույնական է: Հատկապես արժանահիշատակ են Տիգրան Մեծի ժամանակներից մեզ հասած ոսկյա դրամները: Դրանցից մեկն այժմ պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանում (այն 1910 թվականին Երվանդ Լալայանը Վանի ռուսական

փոխհյուպատոս Օլֆերիևից նվեր էր բերել Մաթեոս Բ Ամենայն Հայոց կաթողիկոսին, ում կարգադրությամբ էլ զետեղվել է Սբ. Էջմիածնի թանգարանում), իսկ մյուսը գտնվում է Հռոմի Վատիկանի թանգարանում (Առաքելյան, 2018): Տարբեր ժամանակներում հայտնաբերվել են հարյուրավոր արծաթե և պղնձե դրամներ: Դրանց վրա ևս Տիգրան Մեծի կերպարը համադրելի նույնական է:

Տիգրան Մեծից ավելի քան երկու հազար տարի հետո նրան նվիրված քանդակագործական աշխատանքները հենց այդ դիմապատկերի արտացոլանքն են:

Հուշադրամ: Հատել է Հայաստանի կենտրոնական բանկը 1999 թվականին: Հուշադրամի դիմերեսին Տիգրան Մեծ արքայի ժամանակ հատված արծաթե դրամի դարձերեսի պատկերն է և ՀՀ զինանշանը: Հուշադրամի դարձերեսին Տիգրան Մեծի արծաթե դրամի դիմերեսի պատկերն է՝ արքայի կիսադեմը: Էսքիզների հեղինակն է Հրաչյա Ասլանյանը. հուշադրամը հատվել է Նիդերլանդների դրամահատարանում (տե՛ս նկ. 1):

նկ. 1

Մեկ այլ հուշադրամ է թողարկվել 2003 թվականին Ավստրիայի դրամահատարանում: Դրա դիմերեսի էսքիզի հեղինան է Կարապետ Աբրահամյանը: Դարձերեսը ձևավորել են Ավստրիայի դրամահատարանի մասնագետները (տե՛ս նկ.2) (Համբարձումյան, Թելունց, 2011):

նկ. 2

Ներկայացված դրամները պատկանում են քանդակագործական հարթաքանդակ տեսակին:

Պնակիտներ: Բոստոնի նրբագեղ արվեստի թանգարանում ներկայացված է Տիգրան Մեծի դիմապատկերի փորագությամբ հազվագյուտ թանկարժեք քար: Պնակիտը պատրաստված է Տիգրան Մեծի օրոք կարմիր զասպերից և վերագրվում է մ.թ.ա. I դարի կեսերին: Այն 14 մմ (9/16 դյույմ) երկարությամբ քար է: Համաձայն թանգարանի նկարագրության՝ թանկարժեք քարը գնվել է Զմյուռինայում (Օսմանյան

Թուրքիա) 1900 թվականին: Պատկերաքարը գնել է Էդվարդ Պերի Ուորենը: Նա այն Բոստոնի գեղարվեստի թանգարանին է վաճառել 1901 թվականին: Թանգարանը պատրաստել և ցուցադրում է բնօրինակի ծեփապատճենը: Թանգարանի նկարագրությամբ կարմիր զասպերի վրա Տիգրան Մեծը ներկայացված է ձախ դիմապատկերով՝ հինգգագաթանի հայկական խույրով, ինչպես դրամների վրա: Թագը շրջագծված է կլոր կետերով: Խույրի վրա ութաթև աստղ է, որի երկու կողմերում մեջքով դեպի աստղը թեքված արծիվներ են: Կետերով նշված երկու փեշատուտ, մեկնվում են խույրից՝ ծածկելով արքայի մազերն ու ականջը: Թանկարժեք քարի վրա փաստորեն փորագրված է Տիգրան Մեծի դրամի պատկերը:

2014 թ. Christies աճուրդի տունը հրապարակել է նմանատիպ ևս մեկ հնագիտական գտածո: Կալցինացված քաղկեդոնաքարին արքայից արքա Տիգրան Մեծի պատկերն է: Արվեստի այդ գործը թվագրվել է մոտավորապես մ.թ.ա. 95-56 թվականներով և գնահատվել է 10.000-15.000 ԱՄՆ դոլար (տե՛ս նկ.3) (Ավետիսյան, 2018):

նկ. 3

Լուի XIV (1638-1715 թթ.) պահանջով անտիկ քանդակների կրկնօրինակներ են տեղակայվել Վերսալի Լատոնի պարտեր այգու աստիճանաեզրերում: Ձախ կողմում ստեղծման ժամանակագրական հաջորդականությամբ տեղադրված են «Ապոլլոն» (Բելվեդեր), ընդօրինակել է Մազելինը 1686 թ., «Ուրանիա» ընդօրինակել է Կարլիերին 1685 թ. և այլ արձաններ: Այդ կողմի վերջին արձանը՝ «Գերի Տրդատը» /հայոց արքա/ ընդօրինակել է Էնդրեն 1688 թ.: Աստիճանների մյուս կողմի երկրորդ արձանը կրում է *«Պարթևստանի թագավոր» կամ «Բանտարկված Ֆառնեսը»*, *կամ «Տիգրան. հայոց արքա»* անունը: Այն պատրաստել է Մատթեոս Լեսպագնանդելլին 1683 թ. (Pierre de Nolhac, 1925):

Մատթեոս Լեսպագնանդելլը ժամանակի հայտնի քանդակագործներից է: Վերսալում կա նրա պատրաստած դաչացիների թագավորի մարմարե ֆիգուրի,

Դիոգենեսին պատկերող երկու քանդակի, Սոկրատեսը ձեռքին մատյաններ քանդակի կրկնօրինակներ (Lecomte, 1700): Մատթեոս Լեսպագնանդելլի *«Պարթևստանի թագավոր» կամ «Բանտարկված Ֆառնեսը» կամ «Տիգրան. հայոց արքա»* արձանն ընդօրինակվել է Հռոմից բերված մոդելի օրինակով: 226 սմ բարձրությամբ արձանը ներկայացնում է մի տխուր մարդու՝ խաչված ձեռքերով (Maral, 2012): Այս արձանում ներկայացված Տիգրան Մեծն ունի առատ վարսեր և չափավոր մորուս, գլխին դրված է կոնաձև, ծայրը տափակ խույր, կրում է չափավոր լայնության մինչև ծնկները հասնող հագուստ, վարտիքը նույնպես չափավոր լայն է, հասնում է մինչև ոտնաթաթերը: Մեջքին ունի գոտի, որը, լայնությամբ գրկելով գոտկատեղը, երկու կողմից կապվում է իրար և իջնում զգեստի վրա: Թիկնոցը լայն, ճոխ, ծալքերով ծածկում է թիկունքը, ճարմանդով ամրացված է աջակողմյան ուսի մոտ և իջնում է մինչև պատվանդանը. կոշիկները լավ չեն նշմարվում (տե՛ս նկ. 4) (Վարդան, Հացունի, 1924):

Տիգրան Մեծին վերագրված այս արձանն առավել կարող է ասոցացվել հայոց դիցարանի Միհրի հետ: Վերջինս ունի նույն պատկերագրությունը: Միհրի պաշտամունքը տարածված էր Փոքր Ասիայից մինչև Հնդկաստան (Առաքելյան, 1959): Միհրի արձանը ներկայացված է մի երիտասարդի կերպարանքով՝ բազմած կամ կրթնած ցուլի վրա, գլխին դրված է հայկական գդակ: Մանրամասների մեջ չմտնելով (ջահակիր երիտասարդներ, շուն, մրջյուններ, կարիճներ,) փաստենք, որ Տիգրան արքային հենց Միհրի նախատիպով են քանդակել (տե՛ս նկ. 5) (Ալիշան, 2002):

նկ.4

նկ.5

համեմատ

Պատմական տեսանկյունից վերլուծելով նշված ստեղծագործությունը՝ կարող ենք

ասել, որ եթե Լեսպագնանդելլին կրկնօրինակել է Հռոմում ստեղծված Տիգրանին պատկերող արձանը, ապա առավել ակնհայտ է դառնում, որ հայոց արքան ներկայացվել է ոչ արքայավայել պատշաճ տեսքավ: Ինչպես հռոմեական պատմագրության մեջ, այնպես էլ արվեստում հայոց արքայի կերպարին ոչ հարիր տեսք են հաղորդել: Լեսպագնանդելլի այս աշխատանքը գուցե ոչ միտումնավոր, բայց դրա արտահայտությունն է: Բայց եթե Տիգրան արքայի սույն արձանին նայենք նկարագրական տեսանկյունից, ապա այն նման է հունական արձաներին, ինչից հետևում է, որ հայոց արքան ներկայացվել է հելլենականացված տեսքով: Հայտնի է, որ Տիգրան Մեծը հելլենիստական մշակույթի վերջին ջատագովներից մեծագույնն էր: Դրա վկայությունն են նրա լատինատառ դրամները, մեծ քաղաքներում կառուցված թատերական շինությունները: Միհր դիցի արձանի հետ Տիգրան Մեծի նմանապատկերումի մասին պատմաբան Ժ.Խաչատրյանը գրել է. «Խալդի աստծո դերը հետարարատյան թագավորության Հայաստանում ստանձնել է Միհրը: Կարելի է ենթադրել, որ և՛ Երվանդունիներին, և՛ Արտաշեսյաներին, և՛ Արշակունիներին Միհրն է թագավորություն տվել: Միհրն արքայից արքայի տարազով է, գլխի շուրջը ճառագայթաձև պսակով, ինչպես Կոմմագենեում, որը նրա տարբերիչ հատկանիշն է» (ճառագայթաձև պսակը խորհուրդն է հայոց արքայի թագի ութաթև աստղի) (Խաչատրյան, 1998):

Հայ քանդակագործության ասպարեզում Տիգրան Մեծի կերպարին անրադարձել են Լևոն և Հայկ Թոքմաջյանները, որոնք հայոց արքայի կերպարը ներկայացրել են երեք գործով:

Լևոն Թոքմաջյանը իր երկրորդ «Տիգրան Մեծ» արձանի մասին հարցազրույցներից մեկում ասել է. «Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Նոր Նորքի բարձունքում 2004 թվականին կանգնեցվեց Տիգրան Մեծի մարմարե արձանը: Այդ քանդակի տեղադրումը կարևոր նշանակություն ունեցավ ինձ և որդիներիս՝ Վահեի ու Հայկի համար: Կոմպոզիցիան շատ բարդ էր քանդակելու համար: Տիգրան Մեծի աջն առաջ է մեկնված քարե քանդակների մեջ (հազվագյուտ է այն լինում). ձախ ձեռքով արքայական գայիսոնն է բռնել, իսկ գլխին արքայական թագն է: Այս ամենը խրոխտ և հերոսական կեցվածք է տալիս արձանին» (Թոքմաջյան, 2018): Արձանի նյութը վարդագույն մարմարից է, գրանիտե պատվանդանով ընդհանուր

բարձրությունը 5 մ., ճարտարապետն է Ռազմիկ Օհանյանը (տե՛ս նկ. 6) (Խանջյան, 2004):

Լևոն Թոքմաջյանի «Տիգրան Մեծ» աշխատանքը ստեղծվել և ՀՀ նախագահի նստավայրի առջևի մասում տեղադրվել է 2000 թվականին: 2011 թվականի մայիսի 2-ին Տիգրան Մեծի և Նոյի արձանները ճակատամասից ապամոնտաժվել և տեղափոխվել են շենքի հետնամաս (Նոյ նահապետն ու Տիգրան Մեծն ընդամենը տեղափոխվում են, 2011): Աձանը կերտվել է մարմարից, ունի 2,8 x 1,6 x 1,0 մ չափ (Խանջյան, 2004): Արքան նստած է գահին, որի երկու կողմերում պատկերված են մռնչացող առյուծների գլուխներ, դրանք խորհրդանշում են ուժ և զորություն: Արքան կրում է արքայական ծիրանի: Այն ճարմանդով ամրացված է ձախ ուսի վրա: Ձեռքում պահել է արքայական գավազանը, որի գլխիկը սեղմված է կրծքին բացված արևին նմանվող ճառագայթներով. աջ ձեռքը դրված է ծնկին, որի ցուցամատին արքայական մատանին է (այն արքայական պատկանելիության խորհուրդն է արտահայտում), ձախ ոտքը աջից մի փոքր գտնվում է առաջ (տե՛ս նկ.7) (Թոքմաջյան, 200):

Երկու արձանները նույն քանդակագործի հորինվածքն են: Առաջինում արքան կանգնած է, երկրորդում՝ նստած է գահին, դիմագծերը գրեթե նույնն են, նյութը մարմարն է, միայն գույների տարբերությունն է առկա: Քանդակագործի աշխարհայացքը Տիգրան Մեծի կերպարի կերտման առումով չորս տարիների ընդմիջման ընթացքում մեծ փոփոխության չի ենթարկվել, և այն ցույց է տալիս արվեստագետի մնայուն ձեռագիրը:

նկ. 6

նկ. 7

Հայկ Թոքմաջյանը ստեղծել է Տիգրան Մեծ արքայի բարձրաքանդակը: Ստեղծագործությունը ավելի շատ աչքի է ընկնում իր խորհրդանշական բնույթով,

քան կոնկրետ կերպավորմամբ: Տիգրանի կերպարը այլաբանորեն կարելի է համարել հայրենիքի ուժը և հավերժությունը խորհրդանշող: Չնայած այս գործի ոչ մեծ չափսերին, այն մոնումենտալ հնչեղություն ունի: Արքայական խորհրդանիշների առկայությունը համոզիչ են դարձնում հայոց մեջ արմատացած Տիգրանի ոգին և հզոր էությունը (տե՛ս նկ.8) (Գասպարյան, 2010):

2016 թ. հոկտեմբերի 8-ին՝ Էջմիածին քաղաքի հիմնադրման 2701-ամյակի տոնակատարության ժամանակ, Էջմիածին քաղաքի սրտում բացվեց «Տիգրան Մեծ» հուշարձանը: Այս հուշարձանի տեղադրման գաղափարը եղել է ՀՀ վաստակավոր բժիշկներ Կառլեն և Սառա Եսայաններինը (Շամշյան, 2016): Արձանի հեղինակն է Տիգրան Հովհաննիսյանը: Նա Տիգրան Մեծին պատկերել է արքայի դրամի վրա եղած պատկերի նմանությամբ: Տիգրան Մեծը կանգնած է պատվանդանի վրա ամբողջ հասակով, հայացքն ուղղված դեպի արևմուտք (Մասիս լեռը), ունի երիտասարդ դիմագծեր, կրում է ռազմական հագուստ, որի վրայից իջնում է արքայական ծիրանին, կրծքի երկու կողմերում պատկերված են մեկական արծիվներ (աստվածային իմաստության և ուժի խորհրդանիշ), ձեռքերի բազուկներին կրում է ռազմական բազկակալ, աջ ձեռքում թուր է, իսկ ձախը հենված է մոնչացող առյուծի գլխին մատնեմատին և ճկույթին կրում է մատանիներ, (տե՛ս նկ.9) (Հովհաննիսյան, 2016):


նկ. 8

նկ.9

Արմավիրում 1995 թվականին բացվել է «Տիգրան Մեծ» ռազմամարզական վարժարանը (սկսել է գործել 1996 թվականից)՝ ի պատիվ արցախյան պատերազմում «Մեծն Տիգրան» գնդի ազատամարտիկների կատարած սխրանքների: «Տիգրան Մեծ» ռազմամարզական վարժարանն ունի հատուկ ուղղվածություն՝ պատրաստել կրտսեր կադրեր բանակի համար: Վարժարանի

մուտքի վերևում գտնվում է «Տիգրան Մեծ» շրջանակաձև հարթաքանդակը: Այն պատրաստված է արքայի դրամների նմանությամբ (տե՛ս նկ. 10) (Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան, 1996):

նկ. 10

Նմանատիպ մեկ այլ դիմապատկեր առկա է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի մշակույթի պալատի ձևավորման հարթաքանդակում: Կենտրոնում երկու երիտասարդ աղջիկներ իրենց ձեռքում պահում են Տիգրան Մեծի պատկերով սկավառակ: Հարթաքանդակի երկու կողմերում գտնվում են հայկական երաժշտական արվեստը ներկայացնող նաժիշտները, պարողները՝ տոնախմբության խաղաղությունը պահպանող զինվորներ (տե՛ս նկ. 11) (Կետիկյան, 2008):

Վանաձորի մշակույթի տան ձևավորման մաս, նկ.11

Հովսեփ Պապիկյանը նույնպես անդրադարձել է Տիգրան Մեծի կերպարին: Նրա կերտած հարթաքանդակի դիմերեսին պատկերված է Տիգրան արքան՝ «Տիգրան Մեծ, 95-55 մ.թ.ա.» մակագրությամբ: Դարձերեսին պատկերված է մարտակառքում կանգնած արքան, որ ուժեղ սլացքով շարժվում է առաջ, դեմքը շրջանագծված է արևի ճառագայթներով՝ խորհրդանշելով արքայի փառքը և հավերժությունը: Ձիերի և կառքի ներքևում գրված է 2000 թիվը: Հավանաբար քանդակագործը ցանկացել է հիշեցնել, որ 2000 տարի առաջ, ի դեմս Տիգրան Մեծի, ունեցել ենք մեր պատմության ոսկեդարը (Մարկոսյան, Սահակյան, 1987):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Մեծի կերպարի մասին խոսելիս առաջինը մեր մտապատկերում գալիս են նրա պատկերով հատված դրամները, որոնք իր ժամանակի նշանավոր

քաղաքների և դրամահատարանների տնտեսական գործարքների գլխավոր միջոցն էին: Տիգրան Մեծի հռչակը այնքան մեծ էր, որ նրա կերպարը դրամներից անցել է քանդակագործներին: Վերջիններս նրա կերպարը ճանաչելի դարձրին հանրությանը (դիմագծերը և թագի ձևը պահպանվում է, իսկ մարմնի կառուցվածքը դրվել է տարբեր ձևերի մեջ): Մատթեոս Լեսպանանդելի «Տիգրան, հայոց արքա» քանդակը վկայում է հայոց արքայի Ալեքսանդր Մակեդոնացու կողմից տարածված հելլենիստական մշակույթը կրող լինելու փաստի մասին, իսկ այն որ քանդակի բնօրինակը պատրաստվել է Հռոմում և վերակերտվել Փարիզում, Տիգրան Մեծի մեծությունն է խորհրդանշում: Աշխատանքում փորձ է արվել պատմաժամանակագրական, համեմատական, վերլուծական մեթոդների միջոցով ամբողջության մեջ ներկայացնել Տիգրան Մեծի կերպարին նվիրված գործերը: Ընդգծվում է այն կարևոր փաստը, որ Տիգրան Մեծի կերպաը բովանդակային և խորհրդաբանական առումով հարազատ է իր ապրած ժամանակին և այսօր ապրող նրա ժողովրդին՝ հայությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ալիշան Ղ. (2003). *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*. Երևան, Էդիթ Պրինտ հրատ.

Առաքելյան Ա. Գ. (1959). *Հայ ժողովրդի մտավոր մշակութի զարգացման պատմություն /I դ. մ.թ.ա.-XIVդ./,*. Երևան, Հայպետհրատ հրատ.

Առաքելյան Լ. (2018). Մեր պատմության մետաղյա ասպետները. *«Իրատես»* Շաբաթաթերթ, *46*, 10–11.

Ավետիսյան Վ. (2018). *Տիգրան Մեծի պատկերով հազվագյուտ քար*. https://blognews.am/arm/news/573538/hazvagyut-u-hnaguyn- qar-ori-vra-tigran-metsi-dimankarn-e-poragrvats.html

Գասպարյան Ա. (2010). *Տիգրան Մեծի 2150-ամյակի արթիվ*. Երևան, «Աշխարհի հայ նկարիչների միավորում» հ/ կ. http://www.magaghat.am/archives/35795

Թոքմաջյան Լ. (2018). *Քարեղեն երգեր*. Երևան, Թի Էմ Ջի գրուպ

Թոքմաջյան Լ. (2000). *Տիգրան Մեծի հուշարձան*. Երևան. https://visityerevan.am/places/details/337/am/

Խանջյան Ա. (2003). *Երևանի արձանները. Ճանաչենք հայ մեծերին.* Երևան, ՎՄՎ-Պրինտ հրատ.

Խաչատրյան Ժ. Դ. (1998). Ուրարտա-հայկական պաշտամունքային առնչություններ. Բանբեր, *3*(96), 61–76. https://ephbanber@ysu.am

Կետիկյան Ժ. (2008). *Քանդակագործ.* Երևան, Վան Արյան հրատ.

Համբարձումյան Հ., Թելունց Մ. (Ed.). (n.d.). *Հայաստանի Հանրապետություն, Հուշադրամներ.* Երևան, Տիգրան Մեծ հրատ.

Հայազն Տ. (2005). *Հայկական իշխանական զինանշանները (նկարագրական փորձ)* (Vol. 1). Երևան, հեղինակային հրատ.

Հայ ժողովրդի պատմություն (Vol. 1). (1972). Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.

Հովհաննիսյան Տ. (2016). *Տիգրան Մեծի հուշարձան, Արմավիրի մարզ, Վաղարշապատ.* https://armlur.am/593822/

Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան. (1996). Արմավիրի մարզ, Արմավիր.

Մարկոսյան Օ., Սահակյան Մ. (Ed.). (1988). *Հայաստանի երիտասարդ նկարիչները.* Երևան, Սովետական գրող հրատ.

Մուշեղյան Խ.Ա. (1984). *Դրամական շրջանառությունը Հայաստանում.* Երևան, ՀՍՍՀ ԳԱ, հրատ.

Շամշյան Գ. (2016). Հայոց մեծերին ճիշտ ժամանակին ներկայացնում են մեծերը ՀՀ վաստակավոր բժիշկներ Կառլեն և Սառա Եսայաների հերթական նվերը. այս անգամ Էջմիածինցիներին [Video]. https://shamshyan.com/hy/article/2016/10/08/97878/

Վարդան Հ., Հացունի Վ. (1923). *Պատմութիուն հին հայ տարազին.* Վենետիկ, Ս. Ղազար հրատ.

Նոյ նահապետն ու Տիգրան Մեծն ընդամենը տեղափոխվում են. (2011). https://՝ https://www.armversion.am/

Alexandre Maral (2012). *L' «Estat présant des figures», première description des sculptures des jardins de Versailles après l'installation de la cour.* https://www.persee.fr/doc/bec_0373- 6237_2012_num_170_1_464181

Florent Lecomte (1700). *). Cabinet des singularités d'architecture, peinture, sculpture,*

et gravure (Vol. 1). Paris.

Pierre De Nolhac (1925). *Versailles Résidence de Louis XIV/Versailles et la Cour de France*. Paris, Louis Conard libraire-éditeur.

REFERENCE LIST

Alishan G. (2003). Drevnyaya armyanskaya vera ili yazycheskaya religiya *(Ancient Armenian faith or pagan religion)*. Erevan, Izd. Pechat. izd.

Arakelyan A. G. (1959). Istoriya razvitiya intellektual'noj kul'tury armyanskogo naroda *(The history of the development of the intellectual culture of the Armenian people)* / I vek. do n.e.-XIV vek/,. Erevan, Ajpetrat izd.

Arakelyan L. (2018). Metallicheskie rycari nashej istorii *(Metal levers of our history)*. Ezhenedel'nik «Razgnevannye», 46, 10-11.

Avetisyan V. (2018). Redkij kamen's izobrazheniem Tigrana Velikogo *(Rare stone depicting Tigran the Great)*. https://blognews.am/arm/news/573538/hazvagyut-u-hnaguyn-qar-ori-vra-tigran-metsi-dimankarn-e-poragrvats.html

Gasparyan A. (2010). K 2150-letiyu Tigrana Velikogo *(To the 2150th anniversary of Tigran the Great)*. Erevan, "Associaciya armyanskih hudozhnikov mira" №. http://www.magaghat.am/archives/35795

Tokmadzhyan L. (2018). Kamennye pesni *(Stone songs)*. Erevan, TMG Group

Tokmadzhyan L. (2000). Pamyatnik Tigranu Velikomu *(Monument to Tigran the Great)*. Erevan. https://visityerevan.am/places/details/337/am/

Handzhyan A. (2003). Statui Erevana. Poznakomimsya s velikimi armyanami *(Statui Erevana. Poznakomimsya s velikimi armyanami)*. Erevan, VMV-Print izd.

Ketikyan ZH. (2008). Skul'ptor *(Sculptor)*. Erevan Van Ar'ya izd.

Ambarcumyan G., Telunc M. (Red.). (n.d.). Respublika Armeniya, Pamyatnye monety *(Republic of Armenia, Commemorative coins)*. Erevan, Tigran Mec izd.

Hajazn T. (2005). Armyanskie carskie gerby *(Armenian royal coats of arms)*. (ocherk-ocherk) (T. 1). Erevan, avtorskoe izdanie.

Markosyan O., Saakyan M. (Red.). (1988). Molodye hudozhniki Armenii *(Young artists of Armenia)*. Erevan, sovetskij pisatel' izd.

Mushegyan K.A. (1984). Denezhnoe obrashchenie v Armenii *(Money circulation in Armenia)*. Erevan, AN SSSR, izd.

Vardan H., Hacuni V. (1923). Istoricheskij staryj armyanskij kostyum *(Historical old Armenian costume)*. Veneciya, sv. Lazar izd.

Hachatryan ZH. D. (1998). Urartsko-armyanskie religioznye otnosheniya *(Urartian-Armenian religious relations)*. Banber, 3 (96), 61–76. https://ephbanber@ysu.am

Ovannisyan T. (2016). Pamyatnik Tigranu Velikomu *(Monument to Tigran the Great)* Armavirskij marz, Vagarshapat. https://armlur.am/593822/

Patriarh Noj i Tigran Velikij prosto shevelyatsya *(Patriarch Noah and Tigran the Great just move)*. (2011). https://: https://www.armversion.am/

SHamshyan G. (2016). V nuzhnoe vremya starejshiny prepodnosyat armyanskim starejshinam ocherednoj podarok zasluzhennyh vrachej Armenii Karlena i Sary Esaya, na etot raz zhitelyam Echmiadzina *(V nuzhnoe vremya starejshiny prepodnosyat armyanskim starejshinam v poryadke ocheredi podarkov zasluzhennym vracham Armenii Karlena i Sary Esaya, na etot raz zhitelyam Echmiadzina)* [Video]. https://shamshyan.com/hy/article/2016/10/08/97878/

Aleksandr Maral' (2012). «Gosudarstvennoe predstavlenie figur», pervoe opisanie skul'ptur sadov Versalya posle ustanovki dvora *("State representation of figures", the first description of the sculptures of the gardens of Versailles after the installation of the court)*. https://www.persee.fr/doc/bec_0373-6237_2012_num_170_1_464181

P'er De Nol'ak (1925). Versal' Rezidenciya Lyudovika XIV/Versal' i dvor Francii *(Versailles Residence of Louis XIV/Versailles and Court of France)*. Parizh, Lui Konar, knigotorgovec-izdatel'.

Floran Lekont (1700). Kabinet osobennostej arhitektury, zhivopisi, skul'ptury i gravyury *(The Cabinet features architecture, painting, sculpture and engraving)* (Tom 1). Parizh.

РЕЗЮМЕ

ХАРАКТЕР ТИГРАНА ВЕЛИКОГО В МОНЕТАХ И СКУЛЬПТУРАХ

МАДОНА МАРТИРОСЯН

Знаменитый образ Тиграна Великого из современных драм (манет) занимает центральное место как в монументальной скульптуре, так и в высокоскульптурной иконографии. Авторские скульпторы-граверы, создавая круглые статуи, изображали Тиграна Великого по-своему, одевая его в подражание одеждам знаменитых римских правителей того времени. И по той простой причине, что знаменитое армянское изображение Тиграна Великого присутствует на драмах только в размере бюста. В данном случае скульпторы даже не стали защищать известный портрет от драмы, они руководствовались собственными идеями. В этом смысле эпизоды более консервативны. В их высоких скульптурах Тигран Великий имеет узнаваемый образ и повторяет образ на портрет манети. Среди армянских художников статуи Тиграна Великого были созданы представителями рода Токмаджян. Образ царя в их произведениях более символичен, чем по определению конкретен.

Статуя «Тигран, царь Армении» работы Маттеоса Леспаньянделли (XVII век) отличается по форме и содержанию. Ценные скульптуры армянского царя, изображенные на аверсе драм Тиграна Великого, являются оригинальными произведениями искусства, послужившими основой для более поздних скульптурных произведений, изображающих Тиграна Великого.

Статья посвящена образу Тиграна Великого в скульптурном искусстве. На основе историко-хронологического сравнительного анализа произведений сделана попытка понять особенности произведений с изображением Тиграна Великого.

Ключевые слова. Тигран Великий, скульптура, Матеос Леспаньянделли, «Царь Партевстана», Тигран Ованнисян, пнакитес, Овсеп Папикян, «Армянская корона», Красная яшма.

ABSTRACT

THE CHARACTER OF TIGRAN THE GREAT IN COINS AND SCULPTURE

MADONA MARTIROSYAN

The well-known image of Tigran the Great of modern drams occupies a central place in monumental sculpture as well as high-sculpture iconography. While creating round statues, sculptors-engravers depicted Tigran the Great in their own way, dressing him in imitation of the clothes of the famous Roman rulers of the time. The sculptors did not even protect the well-known portrait from the dram: they were guided by their own ideas. In that sense, the episodes are more conservative. In their high sculptures, Tigran the Great has a recognizable image and repeats the image on the drams. Among the Armenian artists, the statues of Tigran the Great were created by the Tokmajian family. In their works, the image of the king is more symbolic than concrete.

The statue "Tigran, King of Armenia" created by Matteos Lespagnandelli (17th century), differs in form and content.

The high-value sculptures of the Armenian king depicted on the obverse of Tigran the Great drams are original works of art.

The article discusses the image of Tigran the Great in sculptural art. Based on the historical and chronological comparative analysis of the works, an attempt was made to understand the features of the works depicting Tigran the Great.

Key words: Tigran the Great, sculpture, Matheos Lespagnandelli, "King of Parthevstan", Tigran Hovhannisyan, pnakites, Hovsep Papikyan, "Armenian Crown", Red Jasper.

Հոդվածը ստացվել է՝ 07.03.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 09.03.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 10.04.2023թ.